

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՄԻԿՐՈ ԶԵՆՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ «ԿԱՄՈՒՐՋ» ՌԻՎԿ ՓԲԸ-Ի 2021 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

«Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամ»-ը (այսուհետ՝ Հիմնադրամ) և «ԿԱՄՈՒՐՋ» ՌԻՎԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հայտարարում են հրապարակային մրցույթ՝ Հիմնադրամի և Ընկերության 2021 թվականի ֆինանսական հաշվետվությունների համատեղ աուդիտ իրականացնելու նպատակով աուդիտորական ընկերություն ընտրելու համար: Աուդիտորական կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշներին.

- լինի Ընկերությունից և Հիմնադրամից անկախ,
- ունենա աուդիտորական գործունեություն իրականացնելու համապատասխան լիցենզիա,
- ունենա առնվազն 3 տարվա աուդիտորական գործունեության փորձ ֆինանսական կազմակերպություններում: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող լավագույն աուդիտորական կազմակերպությունների վրա (Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և ըստ եկամտի լավագույն 10 միջազգային աուդիտորական կազմակերպություններ): Միջազգային ճանաչում ունեցող լավագույն աուդիտորական կազմակերպությունների ցանկը հրապարակված է.

-Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և <http://firm-rankings.vrl-financial-news.com> կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության՝ լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների վրա,

- աուդիտորական հաշվետվություններ ներկայացնելու իրավասություն՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան,
- աուդիտի թիմում ներգրավված պատասխանատու աուդիտորը պետք է ունենան աուդիտի բնագավառում աշխատելու առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, Միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, Սի-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ) փուլերը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական), կամ

Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում: Ընդ որում, աուդիտորական խմբի անդամների առնվազն կեսը պետք է բավարարեն սույն ենթակետերով սահմանված չափանիշներին:

Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող և սույն հայտարարությամբ սահմանված պահանջներին համապատասխանող աուդիտորական կազմակերպությունները մինչև սույն թվականի հոկտեմբերի 11-ը Հիմնադրամին և Ընկերությանն են հանձնում առաջարկությունների երկու փաթեթ՝ մեկ ծրարով:

Մրցույթի հայտի առաջին փաթեթով ներկայացվում են միայն հրապարակային մրցույթի մասնակցի կողմից առաջարկվող աուդիտի իրականացման ֆինանսական պայմաններին վերաբերող առաջարկություններ (ծառայությունների ընդհանուր գինը, ներառյալ հարկերը, տուրքեր և այլն, վճարման ձևը, պայմանները, ժամկետները, աուդիտորական կազմակերպության և Ընկերության միջև կնքված պայմանագրով սահմանված աուդիտորական կազմակերպության կողմից պարտականությունների չկատարման դիսկի չափը, աուդիտորական կազմակերպության հայեցողությամբ անհրաժեշտ այլ տեղեկատվություններ և հիմնավորող փաստաթղթեր):

Մրցույթի հայտի երկրորդ փաթեթով ներկայացվում են հրապարակային ծանուցմամբ պահանջվող բոլոր տեխնիկական առաջարկները, տեղեկությունները և փաստաթղթերը (բացի գնային առաջարկից բոլոր էական պայմանները և տեղեկությունները), այդ թվում՝

1. մրցույթի մասնակցի տվյալները՝ այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը,
2. պետական գրանցման վկայականի և աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի պատճենը,
3. աուդիտի աշխատանքներին մասնակցող ընկերության փորձը (մասնավորապես՝ ֆինանսական կազմակերպությունների ցանկը, որոնց վերջին երեք տարվա ընթացքում աուդիտորական կազմակերպությունը մատուցել է աուդիտորական ծառայություններ),
4. աուդիտորական խմբում ներգրավված աշխատողների անունները, ազգանունները, աշխատանքային փորձը (այդ թվում՝ ՀՀ ֆինանսական համակարգում), աուդիտորների որակավորման և մասնագիտական վերապատրաստման վկայականների պատճենները,
5. աուդիտի ընդգրկման շրջանակները (ծառայության մատուցման բնութագիրը),
6. աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները (ներառյալ նախնական աուդիտի անցկացման ժամկետները):

Արտաքին աուդիտորի կողմից ներկայացված տեխնիկական առաջարկները գնահատելիս հաշվի են առնվում նաև հետևյալ չափանիշները.

- Ընկերության հեղինակությունը,
- Ընկերության աուդիտի փորձը ՀՀ ֆինանսական կազմակերպություններում,

- Աուդիտի թիմի ղեկավարի և ներգրավված աշխատակիցների աուդիտի բնագավառում աշխատանքային փորձը և միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորումը,
 - Աուդիտի թիմի ղեկավարի և անդամներից յուրաքանչյուրի տեղում և հեռակա ներգրավվածությունը աուդիտորական աշխատանքներում (մարդ/ժամ),
 - աուդիտորական եզրակացության և նամակ ղեկավարության փաստաթղթի տրամադրման ժամկետները,
 - Հիմնադրամի և Ընկերության համար էական այլ պայմանները:
- Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան, Սեբաստիա 123, «Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամ» և «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է մինչև 2021թ. հոկտեմբերի 11-ը (փաստացի ստացման և մուտքագրման վերջնաժամկետն է):

«ՄԻԿՐՈ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի և «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

«Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամ»-ը և «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն համատեղ հայտարարում են հրապարակային մրցույթ՝ Ընկերության և Հիմնադրամի 2021 Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու նպատակով:

Մրցույթի հայտերի ներկայացման պայմանները.

1. Մրցույթի հայտն անհրաժեշտ է ներկայացնել առձեռն կամ փոստային ծառայության միջոցով:
2. Հրապարակային մրցույթին մասնակցելու համար ցանկություն հայտնաձև մասնակիցները մինչև հայտերի ներկայացման վերջնական ժամկետի ավարտը կարող են հետ վերցնել մրցույթի հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելուց): Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է սույն հրավերով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին ծանուցումը կարող է ուղարկվել նամակով կամ էլեկտրոնային փոստով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Հիմնադրամին և «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին ք.Երևան, Սեբաստիա 123 հասցեով կամ հեռ. 011 27 00 00 (ներքին՝ 122 և 320), էլ. հասցե՝ info@kamurj.am